25 հոկտեմբերի 2012 թվականի N 1333 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N 1055-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1055-Ն որոշման N 1 հավելվածի 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

35.	Սփյուռքում հայկական մասնագիտական ներուժի համախմբում և Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի ներդրումների խրախուսում	Մասնագիտական համաժողովների կազմակերպում՝ 1) հայ գրականության օրեր 2) լրատվամիջոցների և լրագրողների համահայկական համաժողով 3) օտարերկրյա պետություններում գործող հայկական առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների	ՀՀ սփյուռքի նախարարություն	Հայաստանի գրողների միություն Հայաստանի ժուռնալիստների միություն համահայկական ընկերակցություններ ՀՀ էկոնոմիկայի	2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման

		համաժողովի կազմակերպում Փարիզում ֆրանսիական փորձի ուսումնասիրության նպատակով		նախարարություն			հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածի 45-րդ կետ, 48-րդ կետի «բ» ենթակետ

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ